

ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ 1929-30ԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՀԻՒՄԻՍ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ՍՈՒՐԻԱ ԱՊԱՍՏԱՆԱԾ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Անի Ֆիշենկճեան
fishenkjianani@hotmail.com

Սուրիոյ նման հոծ գաղութի մէջ բոյն դրած անտիրական վիճակն ու օրըստօրէ՛ Սուրիա հասնող գաղթականներու նոր հոսքը - յատկապէս Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջանները - մեծապէս մտահոգած էին կարգ մը ազգային պատկան մարմիններ, որոնք *«գրչով եւ խօսքով Սուրիոյ եւ արտասահմանի մէջ անհրաժեշտ նկատուող հետաքրքրութիւն ստեղծել եւ ուշադրութիւն հրաւիրել կրորով միջոցներով ցաւը արագ դարմանելու, ամոքելու մասին»*¹:

Այս մտահոգութեամբ՝ Տոքթ. Թորոս Պասմաճեան² եւ Խաչիկ Քարուկեան³ շփման մէջ կը մտնեն Ամերիկայի Հայ Կարմիր Խաչի (ՀԿԽ) Կեդրոնական Վարչութեան հետ Կը ծանօթացնեն Սուրիոյ շրջանի բազմազան կարիքները եւ կը շեշտեն օգնութեան գործի անհրաժեշտութիւնը:

Հալէպի ՀԿԽի վարչութիւնը իր 6 Օգոստոս 1924 թուակիր նամակի ամփոփ տեղեկագիրով արդէն ներկայացուցած էր Հալէպի եւ Սուրիոյ տարբեր շրջաններու ՀԿԽի գործունէութիւնը⁴: Նամակի աւարտին տեղական մասնաճիւղի վարչութիւնը փափաք կը յայտնէր Կեդրոնական Վարչութեան մասնաճիւղերէն մէկը դառնալու եւ յետայսու իր ներկայացուցիչներով մասնակցելու Ամերիկահայ ՀԿԽի պատգամաւորական ժողովներուն:

28-30 Յունիս 1928ին Պոսթոնի մէջ կը գումարովի Ամերիկայի ՀԿԽի ճրդ պատգամաւորական ժողովը: Այլազան օրակարգերու կողքին միաձայնութեամբ կը քուէարկովի *«Ջանալ որ Ամերիկայի եւ Արտասահմանի Հ. Կ. Խաչերը օրինական կապ ունենան իրարու հետ»*⁵ բանաձեւը:

Առ այդ, պատգամաւորական ժողովը կ'որոշէ յանձնարարել նորընտիր Կեդրոնական Վարչութեան՝ շարունակել յառաջիկայ տարեշրջանի ընթացքին ատելի մօտիկ եւ սերտ յարաբերութիւն մշակել արտասահմանի բոլոր նոյնանպատակ Հայ Կարմիր Խաչերու հետ եւ օրինական յարաբերութեան եւ միացման կապ ստեղծել (ինչ որ գոյութիւն ունէր Յունաստանի եւ Ամերիկայի ՀԿԽի միջեւ):

Սակայն ճրդ պատգամաւորական ժողովի օրակարգէն ու ներկաներէն չէր վրիպած Սուրիահայ գաղութի տարագիրներու եւ հայ կարիքաւորներու օգնութեան ծեռք երկարելու խիստ կարեւոր հարցը: Կազմակերպութիւնը ընդառաջելով Հալէպի ՀԿԽի եւ Պասմաճեան-Քարուկեան դիմումին, կ'որոշէ ոչ մէկ ճիգ խնայել Սուրիոյ եւ Լիբանանի շրջաններու մէջ յառաջ

բերելու ՀԿԽի կազմակերպութիւններ եւ ամէն գնով օժանդակել անոնց գործունէութեան:

Այս առաջադրանքէն մեկնելով Ամերիկայի ՀԿԽ Կեդրոնական Վարչութիւնը Արտաւագդ Ծ. Վրդ. Սիրմէեանին յղած իր 6 Մայիս 1929 թուակիր եւ թիւ 731 համարով կը յայտնէ իր այս մտադրութիւնը⁶:

Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովի 31 Մայիս 1929 ԿԱ. նիստին կը քննարկուի Ամերիկայի ՀԿԽի Կեդրոնական Վարչութեան մասնաճիւղեր կազմակերպելու առաջադրութիւնը: Յետ խորհրդակցութեան, կ'որոշուի դիմել Հալէպի Հայ Ազգային Կարմիր Խաչի վարչութեան եւ լսել անոնց կարծիքը:

26 Յունիս 1929ին Պոսթոնի մէջ կը գումարուի ՀԿԽի 9րդ պատգամաւորական ժողովը գաղութահայ ՀԱԽերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Կը վերաքննուի ծրագիր-կանոնագիրը: Ժողովը կ'առնէ հետեւեալ որոշումը. «*բոլոր երկիրներու մէջ գոյութիւն ունեցող անջատ Հ. Կ. Խաչերը պէտք էր որ միանային մէկ կեդրոնի մը ղեկավարութեան ներքեւ, ինչպէս նաեւ յարակից այն որոշումը կը պարտադրէր կեդրոնս կազմակերպել նոր շրջաններ եւ միացնելով ընդհանուր կազմակերպական ցանցին*»⁷:

Ամերիկայի ՀԿԽ Կեդրոնական Վարչութեան յանձնարարութեամբ շրջուն գործիչ նշանակուած եւ լիազօրուած Քարուկեան, ամառնային արձակուրդի օրերուն բովանդակ Սուրիոյ հայաքնակ վայրերու մէջ, Կարմիր Խաչի մասնաճիւղեր կը կազմակերպէ:

1929 Յունիս-Յուլիսին Սուրիոյ հայաքնակ շրջաններու մէջ, բացի Հալէպէն, կը կազմակերպուին Հայ Կարմիր Խաչի մասնաճիւղեր⁸:

1929 Հոկտեմբեր-Նոյեմբերին Սուրիա սկսած էին ապաստանիլ Արաբկիրի, Բալուի, Խարբերդի եւ Բշերիկի շրջաններէն տարագրուած հայեր: Արաբկիրէն, Բալուէն եւ Խարբերդէն եկողները կ'ապաստանէին Հալէպ: Իսկ Բշերիկի կողմէն եկողները՝ Քամիշլիի շրջանները: Քամիշլիի Կարմիր Խաչի վարչութիւնը, Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովին նամակով կ'իմացնէր Թուրքիոյ արեւելեան նահանգներէն եւ ի մասնաւորի Խարբերդի շրջակայ գաւառներէն Հալէպ, Հասիչէ, Քամիշլի եւ Գարամանիէ հասած վեց հարիւրէ արեւի ընտանիքներու թշուառ ու անմխիթար վիճակին մասին⁹: Ժողովը անմիջապէս կ'որոշէ Կիլիկիոյ Հայոց Սահակ կաթողիկոսէն խնդրել՝ վեց հարիւրէ արեւի եւ տակալին ժամանելիք հարիւրաւոր գաղթականներու «*տեղաւորման եւ սննդաւորման պարագան ուշադրութեան յանձնել Լիբանանի, Դամասկոսի եւ արտասահմանի Հայ Առաջնորդութեանը եւ բարեսէր ազգայնոց, վերահաս ծմեռէն առաջ օգնութեան փութալու համար այս կարօտեալներուն*»¹⁰: Կ'որոշուի նաեւ գրել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան տեղական մասնաժողովին եւ Հայ Ազգային

Կարմիր Խաչին՝ ստանձնելու գաղթականներու խնամատարութիւն եւ բժշկական օժանդակութիւն կազմակերպելը¹¹:

19 Դեկտեմբեր 1929ին Հալէպի մէջ «գաղթականաց խնամատարութեան մարմին կ'ընտրուի Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին հովանաւորութեան տակ»¹², անդամութեամբ՝ Բժշկ. Ասատուր Ալթունեանի, Բժշկ. Յարութիւն Տէր Ղազարեանի, Հ. Գաբրիէլ Ծ. Վրդ. Գասպարեանի, Արմէն Մազլումեանի եւ Գրիգոր Ազիրեանի: Մարմինը պիտի օժանդակէր նորահաս քրտախօս հայ գաղթականներուն:

Նորակազմ Հալէպի Գաղթականաց խնամատարութեան կողմէ, Դեկտեմբերի կէսերուն Սուրիոյ Օգնութեան Խաչի Շրջանային (Կեդրոնական) Առժամեայ վարչութեան ատենապետ Պասմաճեան կը մեկնի Քամիշլի եւ շրջանները, անհրաժեշտ դեղորայքով ծանրաբեռնուած, ուսումնասիրելու նորեկ գաղթականներու կացութիւնը, ծաւալած տարափոխիկ հիւանդութիւնները եւ կազմակերպուած աշխատանք տանելու:

Ընթերցողին ուշադրութեան ներկայացուող տեղեկագիրերը, Սուրիոյ Օգնութեան Խաչի Շրջանային Վարչութեան կողմէ առաքուած է համանուն բարեսիրական հաստատութեանց կեդրոնական վարչութեանց: Ասոնք որպէս փաստաթուղթ կ'արտացոլեն Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջաններուն մէջ 1929-1930՝ Թուրքիոյ արեւելեան շրջաններէն գաղթող հայերու կացութիւնը, անոնց տեղաւորման, կրթական եւ առողջապահական հարցերը, ինչպէս նաեւ որբահաւաքի աշխատանքն ու այնտեղ նոր ասաններու հաստատումը:

Այս տեղեկագիրերը քաղուած են Սուրիահայ Օգնութեան Խաչի 1930-1933ի տոմարէն¹³: Ասոնք առաջին անգամ շրջանառութեան կը դրուին: Ասոնք հարուստ նիւթ կը հայթայթեն Սուրիոյ հայկական գաղթօճախի պատմութեան ուսումնասիրութեան համար:

Տեղեկագիրերը պահպանած ենք անփոփոխ¹⁴, կատարած ենք ուղղագրական հպումներ միայն:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՅՈՒՆՈՒԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ 1930

ՍՈՒՐԻԱՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ¹⁵

Սիրելի ընկերներ.

Ինչպէս ծանօթ է ձեզի ներկայ տարուայ առաջի ամիսը մեկնեցայ Գամշըլու Թուրքիայէն տարագրուած հայ գաղթականներու տեղաւորման եւ առողջապահական գործերով զբաղելու համար: Մօտ ինը ամիս այդ շրջանները մնալէ վերջ վերադարձած եմ հոս: Ներկայ տեղեկագրովս կու տամ գործի համառօտ պատմութիւնը եւ անցուցած փուլերը:

1929 Հոկտեմբերէն Նոյեմբեր ամիսներուն սկսան Սուրիա ապաստանիլ Արաբկիր, Բալու, Խարբերդ, եւ Բըշերիկի շրջաններէն

տարագրուած հայերը: Արաբկիր, Բալու եւ Խարբերդի շրջաններէն եկողները կ'ապաստանէին Հալէպ: Իսկ Բըշերիկի կողմերէն եկողները Գամըշլուի շրջանները: Առանց համեստութիւննիս վիրաւորելու յայտարարեմ, որ նորեկ տարագիրներու վիճակով հետաքրքրուող եւ համապատասխան աշխատանք եւ միջոցներ ստեղծելու համար առաջի իսկ հերթին մտահոգուողները եղանք մենք եւ ըստ այնու եւ սկսանք աշխատիլ:

Հոս կազմուեցաւ գաղթ. կեդր. խնամատարութիւն մը որը վաւերացուեցաւ վեհ. Սահակ կաթողիկոսի¹⁶ կողմէ: Յիշեալ խնամատարութիւնը կազմուեցաւ հետեւեալներէ՝ Տքթներ Աթունեան եւ Տէր Ղազարեան, Գաբրիէլ Վրդ. Գասպարեան, պ.պ. Արմէն Մազլումեան եւ Գրիգոր Ազիրեան: Խնամատարութիւնը Դեկտեմբերի կիսուն ինձ պարտականութիւն յանձնեց երթալ Գամըշլու եւ շրջանները, քննել եւ ուսումնասիրել նորեկ գաղթականներու կացութիւնը, տանիլ պէտք եղած աշխատանքը անոնց մէջ ծաւալած տարափոխիկ հիւանդութեանց առաջըը առնելու համար եւ տեղեկագրով մը իրենց պարզել անոնց կարիքները:

Ինձ ընկերացուցի նաեւ տեղի բարեգործականի հաւաքիչը իբր գրագիր: Դեկտեմբերի վերջը վերադարձայ եւ տեղեկագրով մը խնամատարութեան ներկայացուցիչ նորեկ քրտախօս հայ տարագիրներու իրական կացութիւնը եւ զանոնք տեղաւորելու համար ձեռք առնուելիք միջոցները: (Այդ տեղեկագրիս մէկ պատճէնը ժամանակին ղրկած եմ Ամերկ. Հ. Կ. խաչի կեդր. վարչութեան):

Բայց խնամատարութեան բոլոր անդամները խնդրին չէին մօտենար անկեղծութեամբ եւ բարեխղճութեամբ: Խնամատարութեան անդամներէն մէկը, տեղիս Բարեգործականի մասնաճիւղի ատենապետը, ամէն ճիգ եւ Էնթրիկ ի գործ կը դնէր յիշեալ մարմնի չէզոք անդամները գործէ պաղեցնել եւ չէզոքացնելու ուղղութեամբ: Ի հարկէ այս խաղերը¹⁷ առանց յետին նպատակի չէին. համաձայն Բարեգործականի կեդրոնէն իր՝ ստացած գաղտնի հրահանգին կը ճգնէր տարագիրներու տեղաւորման վերաբերեալ գործերը կեդրոնացնել Բարեգործականի մարդոց ձեռքին մէջ եւ յաչս հայութեան այս գործը ցոյց տալ իբրեւ Բարեգործականի ձեռնարկ:

Այս եւ նման երեսոյթներ խնամատարութեան շուրջ կը ստեղծէին անհամ մթնոլորտ մը որ շատ բնական է պիտի ունենար իր վատ հետեւանքները եւ գլխաւոր պատճառներէն մէկը պիտի դառնար գործի ծախողման:

Այս խնամատարութիւնը Յունուարի վերջերը կրկին առաջարկեց ինձ երթալ Գամըշլու եւ ստանձնել տարագիրներու բժշկական խնամքի հոգը եւ միաժամանակ աշխատիլ տեղաւորման գործին: Իմ առաջարկի վրայ ինձ

ընկերացուցին Պրն. Միսաք Մելքոնեանը, գիւղէ հալէ գիւղաշինութենէ հասկցող մէկ մը:

Վերջին վայրկեանին որոշեցին նաեւ մերը հետը դրկել պատ. Ալիարոն] Շիրաճեանը (Տքթ. Ալթունեանի վստահելին) եւ Բարեգործականի հաւաքիչը:

Ոչ պատուելին եւ ոչ ալ Բարեգործականի հաւաքիչը չունէին եւ չունին տեղաւորման եւ գիւղաշինութեան գործ կազմակերպելու, տնօրինելու, ժողովուրդ ղեկավարելու կարողութիւն եւ ընդունակութիւն, ոչ մէկ մասնագիտական հմտութիւն եւ աւելին¹⁸ ըլլալով բարեխղճութեան ոչ մէկ նշոյլ:

Ինչու՞ համար կ'երթային այս երկուքը: Բնական է կար յետին միտք մը, պատուելիի եւ Բարեգործականի հաւաքիչի ու գիրենք առաջ քշող Խնամատարութեան անդամներու միջեւ կար ներքին հասկացողութիւն մը, որ այս երկուքը պիտի ըլլային գործի լիազօր վարիչները առաջադրուած գործի մասին այս երկուքի բացարձակ տգիտութիւնը մէջտեղ ըլլալէ վերջ շատ դիւրութեամբ կարելի է չափել եւ հասկնալ գիրենք առաջ քշող եւ իրենց կռնակ հանդիսացող Խնամատարութեան անդամներու անբարեխղճութեան խորութիւնը եւ տարագիր ժողովուրդի մը բիւր կարիքներու հոգը ստանձնելու համար, անհրաժեշտ պատասխանատուութեան հասկացողութեան չգոյութիւնը:

Վերջէն Խնամատարութեան այս մարդիկը իրենց անբարեխղճութիւնը տարին այն աստիճանի որ դեղօրայքի մասին իմ կրկնակի պահանջները շաբաթներով կը մնային բարձիթողի եւ ես քանի մը շաբաթներ պատրաստուած էի գոհանալ այն քինինով որ նախքան իմ մեկնիլը Օգն. Իսաչի Կեդր. Վարչութիւնը դրկած էր Գամըշլու: Պատուելին իր հետ տարաւ երկու օտար օրիորդներ մէկը սինեմայի պատկերահան մը, իսկ միւսը տեղիս բուհի եւ պարագլուխ միսիոնարուի մը, իր ըսելով այս օրիորդները տարագիրներու կացութիւնը աչքով տեսնելէ վերջ մեծ գումարներով պիտի օժանդակեն¹⁹ տարագիրներու տեղաւորման գործին: Բանից դուրս եկաւ որ պատկերահանը իր ֆիլմը ճոխացնելու ետեւէ էր, իսկ միսիոնարուին հանդիպողին տրցակներով բուհիական պրոշիւրներ կը բաժնէր, տարագիր ժողովուրդի մէջ ցրուելու համար:

Մեր հետ կ'երթար առաջնորդարանի կողմէ քահանայ մը եւս տարագիրներու հոգետր մխիթարութեան համար: Պատուիրակութեան այս բազմանդամ կազմով հասանք Գամըշլու: Ինչպէս որ կ'ենթադրէինք չափազանց աղմուկով սկսուած այս գործը տուաւ իր հակազդեցութիւնը եւ շատ չանցած տեղացիները սկսան անհաշտ աչքով դիտել զաղթականներու տեղաւորման գործը:

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԲՈՒՆԾ ԴԻՐՔԸ ՏԱՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՏԵՂԱԽՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

Հայ մամուլի սրտցալ եւ լուրջ մասը իր սրտին շատ մօտ զգաց այս գործը եւ բացաւ հանգանակութեան սիւնակներ ու կարելի աշխատանքը տարաւ այդ հանգանակութիւնները արդիւնաւէտ դարձնելու համար: Դժբախտաբար գտնուեցան նաեւ քանի մը թափթփուք հայ թերթեր, որոնք ինչպէս միշտ այս առթիւ եւս երեւան բերին իրենց ինկած եւ գռեհիկ հոգին, խափանարար ընթացքով եւ ամէնաաղտոտ փրովորքսափոններով աշխատեցան ծախողեցնել նման օգտակար գործ մը:

Թափթփուք հայ մամուլի փրովորքսափոնները առատ նիւթ²⁰ մատակարարեցին տեղական մամուլին, որոնք ամէնաաննշան առիթ մը կամ լուր մը չէին փախցնէր հայութեան վերագրելու համար անհիմն ձգտումներ եւ այսպիսով (կը) ստեղծուէր չափազանց լարուած մթնոլորտ մը նորեկ հայ տարագիրներու շուրջ:

Բաց աստի, օտար օրիորդներու մեր հետ շրջագայիլ եւ տեսնուիլը վատ տպաւորութիւն ձգեց մանտաթեր իշխանութեան պաշտօնեաներուն վրայ, որոնք շատ իրաւացիօրէն չէին ցանկանար օտար ազդեցութիւններ տեսնել իրենց հոգատարութեան տակ գտնուող երկրի մը ներքին գործին մէջ, ինչպէս է գաղթականներ տեղաւորելու գործը:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԵՂԱԽՈՐՄԱՆ ԵՒ ԳԻՒՂԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Գամըշլուէն հարաւ, Գամըշլու եւ Հասիչէի մէջտեղ ճաղճաղի եզերքը, «Թէլ Պրաք» անունով վայր մը տրամադրուեցաւ մեզ գիւղեր շինելու եւ այդտեղ տեղաւորելու համար նորեկ գաղթականները:

Ապրիլի վերջերը սկսաւ տեղաւորման գործը:

Տոքթ. Ալթունեանի կողմէ պատուելին նշանակուած էր գործի լիազօր վարիչ: Չկար ոչ մէկ ծրագիր, գործէ հասկցող ոչ մէկ մասնագէտ: Պատուելին շաբաթներով կը բացակայէր, կ'երթար Հալէպ եւ Պէյրութ եւ գործը կը մնար անգլուխ:

Մինչեւ Ապրիլի վերջերը նոր հարիւր ընտանիք եւ եկան Թուրքիայէն Գամըշլու որով վեց հարիւր ընտանիք ակնդէտ կը սպասէին ըլլալիք կարգադրութեանց²¹:

(Հոս պէտք է յիշատակել պարագայ մը, այդ այն է որ մենք սկիզբի իսկ օրէն այն յոյսը ներշնչեցինք գաղթականներուն որ ըլլալիք կարգադրութենէն բոլորը պիտի օգտուին անխտիր. մեր տուած յոյսերը պատճառ դարձան որ գաղթականները ամիսներով սպասեն անգործ): Առանց նախապէս մշակուած ծրագրի մը Գամըշլուի գաղթականներէն (180) ընտանիք փոխադրուեցան Թէլ Պրաք եւ իրարմէ կէս ժամ հեռաւորութեամբ երկու վայրերու վրայ սկսան հերկել հողը եւ շինել տուները: Կամայականութիւնը եւ անկանոնութիւնը զլուխ առած կը վազէին: Գամըշլու մնացողները մտածող իսկ չկար, կարծես բոլոր

թափուած աշխատանքը եւ կատարուած հանգանակութիւնները այս (180) ընտանիքի վրայ մսխելու էր նպատակը: Փոխադրուած (180)ի տեղաւորման գործն ալ կ'ընթանար անգլուխ այնպէս որ յետագայ ամիսներուն անոնցմէ մօտ վաթսուն ընտանիք զգուեցան կամայականութիւններէ եւ վերադարձան գացին Գամըշլու:

Այդ երկու գիւղերու մէջ կը մնան հիմա միմիայն 110-120 ընտանիքներ, որոնց համար շինուած են մէկ սենեակնոց տուներ. երկու գիւղի համար տրամադրուած են միմիայն 30 լուծք. ընտանիք գլուխ տրուած է մէկական այծ: Իմ գալէս վերջ տուած են նաեւ սերմնցու եւ մինչեւ հունձք բաւելու չափ ալիւր եւ ծաւար:

ԳԱՄԸՇԼՈՒ ՄՆԱՅԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ²²

Մօտ 500 ընտանիք գաղթականներ կը մնան Գամըշլուի մէջ: Ասոնց վիճակով հետաքրքրուող չկայ: Ասոնց կողմէ դժգոհութիւն եւ բողոք բոլորը մնացին անլսելի: Խնամատարութիւնը գրեթէ սպառած է իր նիւթական միջոցները: Նորանոր միջոցներ գտնելու եւ Գամըշլու մնացածներու կացութիւնը բարելաւելու մասին մտածող իսկ չկայ: Ասոնք բժշկական խնամքէ զատ ոչ մէկ օժանդակութիւն ստացած են:

Գամըշլու մնացողները ամռան ընթացքին օրավարձով աշխատեցան մօտակայ արտերու մէջ եւ բանուորութիւն ըրին քաղաքին մէջ: Այնպէս կ'ենթադրեմ որ ամառուայ աշխատանքի շնորհիւ կրցած են ապահովել մաս մը պաշար իրենց ձմռան կարիքներուն համար: Մէկ մասը տուներ շինեցին Գամըշլուի մէջ: Կը կարծեմ, որ ասոնք կը մնան Գամըշլուի մէջ, մօտակայ գիւղերու մէջ վարձքով հող կ'առնեն եւ կը պարապին այս հողերը մշակելով: Ասոնց գրեթէ կէսը չեն կրնար իրենց անձնականէն եղեր առնել եւ ջանք կապել: Հետեաբար լաւագոյն կարգադրութիւնը ասոնց մէջէն անկարող ընտանիքներու մէկական կամ երկուական եզ տալով օժանդակել [է] իրենց որպէսզի գոնէ այդ միջոցով հանեն իրենց ապրուստը եւ քաղաքի մէջ բանուորութիւն ընելով չփճանան:

Եթէ երկու հարիւր ենթադրենք՝ անկարող ընտանիքներու թիւը եւ ամէն մէկին հաշուենք երկու եզ, չորս հարիւր²³ եզով կարելի է այս գործը գլուխ հանել: Ամէն մէկ եզ հիմա կ'արժէ 3 օսմ. հնչ. ոսկի:

ԳԱՄԸՇԼՈՒ ՀԱՍԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Նախքան մեր Գամըշլու հասնիլը, հարսանէթ, ծաղկախտ, թանջք եւ ջերմ գործած են իրենց աւերները նորահաս գաղթականներու մէջ եւ կարճ ժամանակի մը մէջ մօտ (150) հոգի զոհ են գացած յիշեալ հիւանդութեանց: Բժշկական խնամքի եւ դեղի գործածութեանց առաջը առնելու եւ հիւանդները դարմանելու ուղղութեամբ աշխատանքներս տուաւ իւր անմիջական արդիւնքը: Վերջ գտաւ համաճարակը եւ Յունուարէն մինչեւ Սեպտեմբեր մեռան միայն 6-7 փոքրիկներ, ամառուայ տաքի աղթած

մանուկներու փորհարութեան պատճառաւ եւ 3 հոգի մեծեր, մին թոքատապէ, մէկը աղիքներու հիւծախտէ եւ ուրիշ մը լեարդի հիւանդութենէ:

Օգնթ. Խաչի Կեդր. Վարչութեան ղրկած մէկ հիւանդապահուիին իմ հսկողութեան տակ երկու ամիս մնաց Թէլ Պրաք երկու գիւղերը, խնամեց հիւանդները եւ ցաւ ունեցող աչքերը:

Հասիչէ եւս ունեցանք հիւանդապահուի մը, որը նորէն իմ հսկողութեան տակ խնամեց այդտեղ գտնուող գաղթական եւ այլ հայերու հիւանդ²⁴ աչքերը:

Կրթական.- Անցած տարի Սուր[իահայ] Օգնութեան Խաչի տեղական մասնաճիւղերու աշխատանքով Հասիչէ եւ Գամըշլու բացուած են դպրոցներ, որոնց մէջ նորեկ տարագիրներու մաս մը մանուկները եւ այդ քաղաքներու մէջ հաստատուած հայերու մանուկները դաստիարակուեցան:

Հասիչէի մասնաճիւղը անցած ձմեռ կրցաւ ունենալ դպրոցի սեպհական պզտիկ շէնք մը: Գամըշլուի դպրոցին համար վարձուած էր երկու սենեակնոց առանձին բակ մը: Անցեալ տարի մօտ (50) պզտիկներ ունեցած է Հասիչէի դպրոցը եւ 60-70՝ Գամըշլուինը:

Դպրոցներու նիւթական հոգը տարաւ (sic!) տեղական Օգն. Խաչի մասնաճիւղերը օժանդակութեամբ Սուր[իահայ] Օգն[ութեան] Խաչի Կեդր[ոնական] Վարչութեան:

Ամփոփեմ.-

1.- Թէլ Պրաք երկու գիւղերու մէջ տեղաւորուած են 110-120 տուն գաղթականներ:

2.- Թէլ Պրաք փոխադրուած գաղթականներէն (180 տուն) (60) ընտանիք վերադարձած են Գամըշլու չկարողանալով հանդուրժել տիրող անկանոնութեանց եւ կամայականութեանց:

3.- Գամըշլու կը մնան մօտ (500) տուն գաղթականներ, որոնք բժշկական խնամքէ զատ չեն տեսած²⁵ ոեւէ այլ օժանդակութիւն:

4.- Խնամատարութեան մաս մը անդամները գործը Բարեգործականի սեպհականացնելու մարմաջով առաջ քաշեցին գործի բացարձակապէս անտեղեակ եւ անպէտք մարդիկ: Լիազօր վարիչներու անթաքթ եւ անհաշի գործունէութեանց պատճառաւ այս գործը գրեթէ ծախողած է:

5.- Բոլոր միջոցները գրեթէ սպառած են երկու գիւղի վրայ եւ խնամատարութիւնը չի մտածեր նիւթական նոր միջոցներ ձեռք ձգելու համար:

6.- Խնամատարութիւնը չի մտածեր Գամըշլու մնացողներու մասին:

7.- Գամըշլու մնացողներէն երկու հարիւր տուն նկատելով ոչ-ինքնաբաւ ասոնց պէտք է տրամադրել (400) եզներ:

8.- Բոլոր գաղթականները ստացած են բժշկական խնամք եւ մօտ ութը ամսուայ միջոցին մահացութիւնը եղած է շատ ջնջին:

Տեղեկագրելով Կեդր. Վարչութեանդ Գամըջլուի գաղթականներու տեղաւորման գործի պատմութիւնը եւ անցուցած փուլերը ու անոնց ներկայ կացութիւնը:

Կը մնամ յարգանքներով

14 Նոյեմբ[եր] 1930

Հալէպ

Հալէպ 25 – Օգոստ. 1930

**Համառօտ Տեղեկագիր
Սուրիահայ Օգնութեան Խաչի Կեդր. վարչութեան**

Յարգելի ընկերուիկներ եւ ընկերներ.

Համառօտ գիծերու մէջ հարկ կը տեսնենք համաձայն մեր խոստումին՝ գրի առնել եւ ձեր խոր ու բարեացակամ ուշադրութեան ենթարկել Ս.Օ.Խաչի մինչեւ 31 Յուլիս 1930 կեանքն ու գործունէութիւնը զանազան բաժանումներու վերածուած:

Ա. Կազմակերպական.– Քանի մը սրտցաւ ընկերներ, ի տես մեր հոծ գաղութի մէջ բոյն դրած անտիրական եւ ազգ. իշխանութեանց կողմէ բացարձակապէս մոռացութեան տրուած շատ մը վէրքերու, անհրաժեշտ նկատեն գրչով եւ խօսքով, հոս թէ Արտասահման՝ հետաքրքրութիւն ստեղծել եւ ուշադրութիւն հրաւիրելով մղել զիրենք կտրուկ միջոցներու եւ արագ դարմաններու մասին: Ընկերներ Տօքթ. Պասմաճեան եւ Խ. Քարուկեան շփման մէջ մտան Ամերիկայի հայ Կարմիր Խաչի կեդրոնական վարչութեան հետ եւ անոնց ծանօթացնելով Սուրիոյ Շրջանի բազմազան կարիքները շեշտեցին օգնութեան գործի ստիպողականութիւնը: Յիշեալ կազմակերպութիւնը անմիջապէս ընդառաջելով մեր դիմումին, Սուրիոյ եւ Լիբանանի շրջաններու մէջ Հայ Կարմիր Խաչի մասնաճիւղեր հաստատելու պաշտօնը յանձնեց ընկեր. Խ. Քարուկեանի: Ընկերը անմիջապէս մեկնեցաւ Անդր- Եփրատի շրջանը եւ կարճ ատենի մէջ կազմակերպեց Ռաքքա, Տէր-Ձոր, Հասիչէ, Գամըջլու, Ռասէլ- Այն, Թէլ Ապիատ, Արապ Փունար, Ճարապլուսի մասնաճիւղերը: Այդ օրերուն կը զուգահիւյսէր նաեւ մեր դարաւոր Հայրենիքէն անգթօրէն եւ տմարդօրէն Սուրիա շարտուած հազարաւոր հայ տեղահանուածներու ողբալի կացութիւնը: Ոճիր էր ձեռնաձալ նստիլ, քանի որ ազատ ապաստան գտած մեր որբահատորները ոչ միայն անօթի էին եւ մերկ, այլն անգամ ու հիւանդ՝ դէմ առ դէմ կեցած միջավայրի բնական դժուարութեանց եւ վերահաս ձմրան խստութեանց: Բարեբար հրեշտակի մը պէս, այդ դժնդակ օրերուն մէջ, Ամերիկայի Հայ Կարմիր Խաչը, ինչպէս ուրիշ երկիրներու, նոյնպէս եւ մեզ օգնութեան հասաւ, իր լաւագոյն

թելադրանքներով եւ դրամական աչքառու գումարով մը (1000+1000=2000 տոլար) արդէն մարմին առած կեդր. առժամեայ վարչութեան տրամադրեց, մեր յարմար դատած եղանակով գործածելու համար զայն: Հակառակ այլոց շիլ նկատառումներու եւ վար նախանձին. նոյնիսկ աչք ծակող իրողութիւնները ուրանալու իրենց յայտնի ճիգին եւ միտքերը պղտորելու աղտոտ փրոփականտին, Կեդր. Առժամեայ վարչութեանս անմիջապէս ձեռնարկեց գործի, պատրաստեց ծրագիր ու կանոնագիր, տեղեկագրեց Ամերիկայի Հ.Կ.Խ. Կեդր. վարչութեան եւ շրջաբերականներով հրաւիրեց գաղութիս սրտցաւ ու բարեկեցիկ հայութիւնը լծուելու աշխատանքի իր հնարաւոր աջակցութեան բաժինը ստանձնելով: Հանրութիւնը համակրանքով ընդառաջեց մեզ: Մինչ այս մինչ այն, Կեդր. վարչութեանս ատենապետ Տքթ. Պասմաճեանը անմիջապէս մեկնեցաւ հեռաւոր Գամըշլու, անհրաժեշտ դեղորայքով ծանրաբեռնուած. տեղին վրայ ուսումնասիրութիւն կատարելու եւ կազմակերպուած աշխատանքը տանելու համար: Շուտով իրարու ետեւէ հայաբնակ գիւղերէ եւ քաղաքներէ սկսան պատասխանել մեր կոչին, կազմելով մասնաճիւղեր եւ խնդրելով Կ. Առ. վարչութիւնը իրենց գործակցութիւնն ու վաւերացումը: Անմիջապէս գոհացում տրուեցաւ իրենց:

Հակառակ մեր ենթադրական հաշիւներուն, նորանոր տեղահանումներու խուժումը Հալէպ եւ ուրիշ վայրեր, ստիպեց մեզ, որ մի քանի մասնաճիւղերով չի գոհանանք եւ ընդարձակենք մեր գործունէութեան դաշտը: Առ այս, անհրաժեշտ նկատուեցաւ մէկ կողմէ դիմել հոգատար եւ տեղական իշխանութեանց մեր կազմակերպութեան ճանաչումն ու վաւերացումը՝ խնդրելով, միւս կողմէ «Առժամեայ»ն փոխելով Սուրիահայ Օգնութեան Խաչի կեդրոնական վարչութեան, անմիջապէս մեկնիլ «Հայաբնակ շրջանները եւ մ. ճիւղերու ցանցը շատցնել: Ուրախ ենք յայտնելու որ, մինչեւ Ապրիլի կէսին արդէն 16-ի հասած էր անոնց թիւը (այժմ 17-ի) 500-600ի մօտ անդամուհիներով, որոնք սկսած են գործել եւ կանոնաւոր կապ հաստատել կեդրոնիս հետ:

Դժբախտաբար ցարդ կարելի չեղաւ պետական վաւերացում ձեռք բերել անելի շուտ թէքնիք պատճառներու եւ օրինական մանրամասնութեանց պակասները մեր կողմէ լրացնելը անհրաժեշտ ըլլալու համար: Հակառակ անոր, ամէն առթիւ եւ ամէն տեղ, Հոգ. եւ տեղ. իշխանութիւնները անվերապահ համակրանք ցոյց տուած են մեզ հանդէպ, եւ իրենց բարոյական օժանդակութիւնը սիրով տրամադրած: Ի հարկէ օրերու խնդիր է այլեւս մեր ծրագրին վաւերացու մը, որմէ յետոյ ամէն յոյս ունինք 30-ի բարձրացնել մեր մ.ճիւղերու թիւը եւ օգնութեան գործի տալ տեսականութեան ամէն երաշխիք:

Ներկայիս ընկերներ Տքթ. Պասմաճեանն ու Հրաչ Փափագեանը Եփրատի Արեւելեան կողմը հսկողի եւ լիազօրի հանգամանքով իրենց

պարտականութիւնը կը կատարենք, իսկ աստին՝ կեդր. վարչութիւնս աշխատանքի կը տանի միշտ նկատի առնելով տեղական իրայատուկ պայմանները: Այս ամրան մեր ընկեր- խորհրդական Միհրան Հերարտեանը դէպի Լիբանան իր արձակուրդի առթիւ, սիրով ընդունեց այդ շրջանի մէջ նոր մ.ճիւղեր կազմակերպելու գործը, այնպէս որ կեդր. վարչութեանը 2-Յունիս 1930-ի թելադրանքը ընկեր Խ. Քարուկեանի բոլոր մ.ճիւղերը այցելելու մասին, անելորդ նկատուեցաւ. եւ սակայն՝ Գըրըք- խան, Սուէտիէ, Անտիոք, Աղեքսանտրէթի շրջանները իրեն ծանօթ ըլլալուն, արդէն մեկնած է եւ լիազօրուած հիմնական կազադրութիւններ կատարելու մեր անունով: Իրմէ ստացուած տեղեկագրի արդիւնքները ձեզ կը հաղորդենք:

Բ.- Ազգահաւաքում.- Դրամական միջոցներու պակասէն, կեդր. վարչութիւնս նշանակելի գործ մը չկրցաւ տեսնել այս մարզին մէջ, հակառակ մեր ծրագրի որոշ տրամադրութեան: Սրտապատառ այս ճիւղերը, որոնք զանազան միջոցներով մեր ականջին կը հասնին, անապատներու խորերէն կամ թրքական մահացու հարէմական գիրութեան զնտաններէն, կսկիծով մը ստիպուած ենք լսել եւ ընթացք չտալ այս դժբախտներուն, մենք որ անոնց հարազատներն ենք, եւ անոնք որ օգնութիւն եւ պաշտպանութիւն կ'աղերսեն: Տուեալ պայմաններու մէջ, այս բախտահալածներէն անոնք որ մահը աչք առած կը փախչին, եւ հայ շոֆէրոներուն կամ գործի մարդոց բացառիկ ջանքերով կեդրոնիս մօտ ազատ շունչ կ'առնեն, կարելի ամէն աջակցութիւն ըրած ենք ու կ'ընենք ոմանց գործ տալով, ոմանց բժշկական խնամք եւ պարենաւորում ապահովելով եւ ոմանց՝ իրենց ազգականներուն դրկելով: Աւելցնենք իսկոյն, որ այս հալածուածները հազիւ թէ ազատագրուած, անհաւատալիօրէն կը կազդուրուին, զարմանալիօրէն կը ճգնին տնտեսութիւն ստեղծել, քրտնաթոր եւ հալալ աշխատանքի կը կապուին, եւ շատ անգամ մեր երեսին կու տան մեր հաւատքի պակասը լուսաշող ապագայի մասին, որ գաշոց է շուտով:

Գ.- Առողջապահական.- Այս նպատակին համար մինչեւ 31- Յուլիս 1930 ծախսած ենք 2098 դրշ. ոսկեդրամ, զումար մը որ ներկայացուած ծով կարիքին երբէք չի համապատասխաներ, տրուած ըլլալով թրաքումի, ճահճատիւնի, բորոտութեան եւ քրսի եւ ուրիշ տեղական քրոնիկ հիւանդութեանց աճուն(աճան) հանգամանքը: Կարելի խնայողութեամբ 5 Օգոստ. 1930-ին, երկու փորձ նըրսեր դրկեցինք Եփրատի արեւելքը, մէկին 4. եւ միւսին 5 օսմ. ոսկի ամսաթոշակով եւ առայժմ երկու ամսուայ համար անկաժէ եղած, մինչեւ որ կեդրոնիդ կողմէ նոր նպաստի առաքումը որու քանակին համեմատ պիտի մեծցնենք մեր առողջապահական գործի տարածութիւնը: Զանացինք որքան հնարաւոր էր հրատարակութեան տալ «Թոքախտ կամ ելնտուկ» անուն գրքոյկ մը զոր խիստ աժան գնով մը կը սպառուի ժողովրդական աղքատ խաւերու մէջ: Օրինակ մը կը

ներփակենք: Վերջերս թէյասեղանի հրափրեցինք N.R.G – ներկայացուցիչ Miss (RE) Slack- ը ընկերակցութեամբ հայ օրիորդի մը եւ Տքթ. Յակոբ Գասապեանի պարզեցինք մեր առողջապահական միջոցներու անբաւականութիւնը եւ խնդրեցինք իրենցմէ այցելու բժիշկ, նըրսեր եւ ձրի դարմանում, գոնէ Եփրատի արեւելեան շրջաններու համար: Մեր այս խնդրանքը խոստացան տեղեկացնել Նիւ Եորքի իրենց կեդրոնին, եթէ մեր կողմէ նոյնիմաստ խնդրագիր մը ներկայացուի իրեն: Իր թելադրանքը կատարեցինք անմիջապէս: Պատասխանը երբ ստանանք ձեզ կը հաղորդենք: Հոս կ'արժէ գոհունակութեամբ արձանագրել թէ, Պէյրութի մեր մասնաճիւղի անձնուէր գործունէութիւնը փորձանք դարձած մալարիայի դէմ: Իր անդամներէն Տքթ. Գուլաքեանը շաբաթական 3-4 օր Էշրէֆիէի հայ տուները այցելելով, առանձին քննութենէ վերջ, կը դարմանէ 30-40 հիւանդներ. մինչ անդին օտար ու ծանօթ հաստատութիւն մը, հակառակ դրամական առատ միջոցներու (ամսական 400 սուրիական ոսկի թղթորմ.) չի կրնար օգտակարապէս պայքարիլ մալարիայի դէմ, անբարեխիղճ բժիշկի մը ծուլութեանն ու անհոգութեան երեսէն, մինչ մեր մասնաճիւղը աննշան գումարով մը եւ կարճ ժամանակի մը մէջ յաջողած է 150 անձ կատարելապէս բուժելով աշխատելու վիճակի մէջ դրած է զանոնք: Առողջապահիկ նոյն գործը, աւելի լայն սահմաններու մէջ կը կատարէ Տքթ. Պասմաճեանը Գամիշլու, Հասիչէ եւ նորահաստատ հայ գիւղերու մէջ, անկեղծ երախտագիտութեամբ մը կապելով շրջանի հայութիւնը մեզ հանդէպ: Այս շրջանի մէջ Հ.Բ.Ը. կամ գաղթ. խնամատարութեան ներկայացուցիչները գրեթէ անհոգ եւ անգործ նստած կամ իրենց լիախուռն ամսականներու օրերը կը համրեն, եւ կամ անխնայ, անփորձ սանձարձակ ու ձախող մսխումներ կ'ընեն:

Դ.- Կրթական.- 1929-1930 Կրթ. տարեշրջանին հազիւ թէ ներելի եղաւ մեզ 5422 դրշ. ոսկեդրամ յատկացնել Գամըշլուի, Տէր Զօրի, Հասիճէի եւ Քէսապի դպրոցներուն: Ոչ միայն մեզ ենթակայ մասնաճիւղերը այլ եւ Հայաշէն, Աֆրին, Նոր Զէյթուն, Ապտ ալ- Հէօյիք – Պաղ- Աղբիւր, Մուշաշէն, Սէլէմիէ, ճ.ճ. ըլլայ անձնական տեսակցութեամբ կամ թղթակցութեամբ դպրոցական նպաստի եւ ուսուցչի խնդրանքներ կը տեղացնեն շարունակ: Կեդր. վարչութիւնս գտնելով հանդերձ այս պահանջներուն անհրաժեշտութիւնը, պիտճէի չգոյութեան պատճառով ստիպուած է լուռ մնալ: Նոր Սերունդը, այն որ հացի հետ եւ թերեւս անկէ առաջ, հայեցի ուսումի եւ տոհմիկ դաստիարակութեան պահանջը կը դնէ մեր առջեւ, ոճիրի հաւասար բան մը գործած կ'ըլլանք եթէ շարունակենք մեր լուռ դիտողի հանգամանքէն դուրս զգալ: Եւ արդէն, շատ տեղեր, օգտուելով մեր նիւթական տկարութենէն կամ բացակայութենէն, անզգալիօրէն սողացած են այդ անտիրական համայնքներու մէջ, գործ դրած եւ արդէն ստեղծած են հիւանդոտ մտայնութիւն մը: Քանի մը խիղճը ձախած պնակալէզ մարդուկներու շնորհիւ, ծաւալ գտած է բուհճի,

մուհապէթճի, դիցարանճի, շաբաթական, մօրմենական, լատինական ազգացաւ ու աղէտալի խմորում մը, դպրոցներու մէջ ու ընչազուրկ ընտանեկան յարկերէ ներս: Եթէ անհոգ մնանք, այս անտիրական համայնքները խիստ կարճ ժամանակի մը մէջ ամբողջովին կ'որսացուին ու կ'այլաստուին ու մենք պիտի դատապարտուինք մեր պարտականութեան մէջ զանցառու գտնուելնուս համար: Գոնէ աչքերը կեանքին նոր բացած այս անմեղները փրկենք, կարելի ամէն զոհողութիւն սպառենք ասոնց Ֆիզիքականի հետ միտքն ու հոգին գողցող յայտնի ու անյայտ անուժերու դէմ պայքարելով եւ անպատճառ մեր հոգի հատորները անոնց կլուփէն ազատագրել ջանալով: Արդ, Կեդր. վարչութիւնս փորձառաբար դիտել կու տայ թէ, միակ արմատական եւ ազդու միջոցը այս կարգի դպրոցները ուղղակի պէտք է առնուին մեր հսկողութեան եւ խնամքին տակ, ապահովել անոնց գրեական պէտքերը եւ ուսուցչ. թոշակը: Բնականաբար ծնողներու նիւթական եւ բարոյական հոգը կիսելու ժամանակ մը, մինչեւ որ մեր ցեղային գոյութեան սպառնացող այս վտանգները անհետին եւ ժողովուրդը սթափի եւ տէր դառնայ իր ջիղերուն եւ իրաւունքներուն:

Լրացնելէ առաջ ատելցնենք թէ, իր կազմակերպութենէն մինչեւ 31-Յուլիս 1930- Ս.Օ.Խ. Կ. վարչութիւնը հրապարակային հանգանակութիւն չհամարձակեցաւ կատարել, եւ ոչ ալ պագառ սարքել կամ անդամագրութիւնը, Հալէպի մէջ իրագործել, պետական վաւերացումը յապաղած ըլլալուն համար: Միայն բաւականացանք միտքերը պատրաստել եւ սպասել նպաստաւոր առիթներու: Որպէս գրասենեակի եւ թղթատարական նախ' ունեցած ենք 475,35 դրկ. ոսկդրմ. նաեւ առժամեայ քարտուղար- գործակատարի մը վարձած ենք Յուլիս-Օգոս. Սեպտ. ամիսներու համար 300 դրշ. ոսկդրմ. ամսականով: Անկէ զատ տեղիս Չ.Ո.Մ-ի²⁶ կայանի շինութեան փոխ տուած ենք 2700դ. ոսկդրմ. Շրջան գործիչներու ճամբու ծախք 421,82 դ. ոսկդրմ. զոր կը ներփակենք: Յառաջիկայ ամիսներուն կը ներփակենք նաեւ մանրամասնուած հաշուիկշիռ մը որոնց գումարը պիտի համապատասխանէ ձեր երկու չէքով դրկուած 2000 տոլ. գումարին:

Ահա՛, յարգելի ընկերուհիներ եւ ընկերներ ընդհ. գիծերու մէջ այն համեստ աշխատանքը զոր տարած ենք եւ անյետաձգելի կարիքները զոր պարտք կը սեպենք յանձնել ձեր խղճամիտ ու խոր ուշադրութեանը, կանխաւ վարած ըլլալով Կեդր. վարչութեանդ ազնիւ ու ինքնամոռաց զգացումներուն հանդէպ անապատները տարտղնուած մեր անգին բեկորներու վերականգնումի ճիգերուն եւ ջանքերուն:

Զերմաջերմ յարգանքներով եւ բարեւնեքով .

Դիւան Ս.Օ.Խաչի Կեդր. վարչութեան

Բ. Ատենապետ

Ատենապետ

- ¹ Ա. Ֆիշենկճեան, *Յուշամարտան Սուրիահայ Օգնութեան Իսաչի 1919-2009թթ.*, Հալէպ, 2010, էջ 47:
- ² Տոքթ. Թորոս Պասմաճեան 1926ին վարած է Հալէպի Հայ Կարմիր Իսաչերու (Հալէպի Հայ Կարմիր Իսաչի եւ Հալէպի Հայ Ազգային Կարմիր Իսաչի) վարչութեանց ատենադպիրի պաշտօնը: 9 Օգոստոս 1929ին Հալէպի մէջ կը յառաջանայ Հայ Գթութեան Իսաչի Սուրիոյ եւ Լիբանանի «Առժամեայ» Շրջանային (Կեդրոնական) վարչութիւն մը (ՀԳԻՍ Ս եւ ԼԿՎ), որուն անդամներէն էր Պասմաճեան: 1930ին ՀԳԻՍ Ս եւ ԼԿՎ կը վերանուանուի Սուրիահայ Օգնութեան Իսաչի Կեդրոնական (Շրջանային) Վարչութիւն (ՍՕԻՍ ԿՎ), որուն ատենապետի պաշտօնը կը ստանձնէ Պասմաճեան: ՍՕԻՍ ԿՎի 25 Օգոստոս 1930ի տեղեկագիրէն կ'իմանանք, որ «բժ. Թ. Պասմաճեան ու Հրաչ Փափազեան լիազօրի հանգամանքով իրենց պարտականութիւնը կատարած են Եփրատի Արեւելեան շրջաններուն մէջ» (Ֆիշենկճեան, էջ 43, 47, 50, 55, 56, 57):
- ³ Իսաչիկ Քարուկեան (Զէյթուն, 1887-Քամիշլի, 1960), Քեսապի մէջ ուսուցչութեամբ զբաղած է: 1929ին Ամերիկայի Հայ Կարմիր Իսաչի Կեդրոնական Վարչութեան կողմէ կը լիազօրուի Սուրիոյ հայաբնակ վայրերու մէջ Կարմիր Իսաչի մասնաճիւղեր հիմնելու՝ օգնութեան փութալու հայ կարիքատուներուն: 1930ին Քարուկեան լիազօրի հանգամանքով կ'ուղարկուի Գրըզ Իսան, Սուետիա, Անտիոք եւ Ալեքսանտրէթի շրջանները (Ֆիշենկճեան, էջ 48, 57. նաեւ՝ Իսաչիկ Քարուկեան, *Տխոր Յուշեր Անցեալէն*, խմբ.՝ Ա. Տազխեան, Պէյրութ, Տպ. Զարթօնք, 1987):
- ⁴ Ա.Օ. Իսաչի դիւան, տոմար՝ 6 Դեկտեմբեր 1922-3 Յունուար 1925, 17 Հոկտեմբեր 1933-13 Փետրուար 1936:
- ⁵ *Ալպոմ, Հայ Կարմիր Իսաչի (Իր Քսանամեակի Առթիւ 1910-1930)*, Պոստոն, 1930, էջ 12:
- ⁶ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդարանի արխիւատուն, Ա.Օ. Իսաչի թղթածրար, նամակ 6 Մայիս 1929, թիւ 731:
- ⁷ *Ալպոմ*, էջ 15:
- ⁸ Քեսապ-Անտիոք՝ 19 Յուլիս 1929ին, Արաբ Փունար՝ 22 Յուլիս 1929ին, Թէլ Ապիատ՝ 24 Յուլիս 1929ին, Րաքքա՝ 26 Յուլիս 1929ին, Տէր Զօր՝ 28 Յուլիս 1929ին, Քամիշլի՝ 31 Յուլիս 1929ին, Ռասուլ Այն՝ 1 Օգոստոս 1929ին, Հասիէ՝ 5 Օգոստոս 1929ին, Գրըզ Իսան՝ 2 Սեպտեմբեր 1929ին են. (Ֆիշենկճեան, էջ 50-4):
- ⁹ Բերիոյ Հայոց Թեմի արխիւատուն, ատենագրութիւն քաղաքական ժողովի, 26 Հոկտեմբեր 1928էն, 23 Սեպտեմբեր 1930, Հէ. Նիստ, 22 Նոյեմբեր 1929, թ. 106:
- ¹⁰ Նոյն:
- ¹¹ Յաւելուածին մէջ տեսնել ՀԲԸՄի կոչը:
- ¹² Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արխիւատուն, «Տեղեկագիր Հալէպի Գաղթականաց Ինճամատարութեան 1 Յուլիս 1930», Բերիոյ Թեմի, հաւաքածոյ 3, ցուցակ (ց.) 1, թղթածրար 82, էջ 16/1: Թղթածրարին էջ 39ին մէջ կը յիշատակուի Գաղթականաց Ինճամատարութեան Կեդրոնական Յանձնախումբ. «... որ իր կարգին ընտրեց օժանդակ յանձնախումբ մը եւ գործի լծուեցաւ իսկոյն»:

1918 Դեկտեմբերին Հալեպի «պատկառելի Գաառական ժողով»ին կողմէ արդէն ընտրուած էր «Գաղթականաց Յանձնաժողով անուն մարմին մը, որ իր կազմին համազգային հանգամանք մը տալու համար Բողոքական եւ Կաթոլիկ յարանուանութիւններէն ալ հրաւիրեց երեքական հոգի եւ սկսաւ անմիջական գործի»: Այս յանձնաժողովը երբեմն ինքզինք կոչած է մասնաժողով, որու հիմնական նպատակը եղած է Հալեպ ապաստանած հայ գաղթականներու «թշուառ կացութիւնը ամոքել» (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արխիատուն, Բերիոյ Թեմի, հաւաքածոյ 3, ցուցակ (ց.) 1, թղթածրար 82, 12 Դեկտեմբեր 1918 թուակիր նամակ/էջ 5 շրջերես/):

¹³ Տոմարը կը գտնուի Հալեպի Սուրիահայ Օգնութեան Իսաչի կեդրոնը:

¹⁴ Տեղեկագիրերու բնագիրերը ձեռագիր են, իսկ վերջաւորութեան ստորագրութիւն չկայ:

¹⁵ թ. 106:

¹⁶ թ. 107:

¹⁷ թ. 108:

¹⁸ թ. 109:

¹⁹ թ. 110:

²⁰ թ. 6:

²¹ թ. 111:

²² թ. 112:

²³ թ. 9:

²⁴ թ. 113:

²⁵ թ. 114:

²⁶ Չափահաս Որբերու Միութիւն Հալեպի մէջ, վայրը՝ Նոր Գիւղ:

**Report on the Armenian Refugees from Western Armenia who Took Refuge in
North-Eastern Syria in 1929-30**

(Summary)

Ani Fishenkjian
fishenkjianani@hotmail.com

The proclamation of the Turkish Republic by Mustafa Kemal Ataturk did not bring to an end the state policy of Armenian persecution. On the contrary the policy took new shape underpinned by Kemal's homogenization policy for the newly proclaimed state. Thus, as of 1923 new waves of Armenians were forced to leave the eastern areas of the republic and take refuge in Syria. These refugees were the surviving remnants of the Western Armenians who had not yet left their homeland, having disguised themselves and integrated into local Kurdish villages. Yet, due to the homogenization policy and the consequences of the 1925 Kurdish revolt, these Armenians were left with no support as the rebel Kurdish *aghās* were persecuted and killed by the state.

The paper focuses on the exodus of these Armenians who took refuge in northern Syria. The paper describes the relief efforts local Armenian organizations made and the campaign they carried out to muster support and raise funds for settling these refugees in the area and their eventual integration into the newly established Armenian communities.